

3551

ՕՍԿԱՆ՝ ՈՒԱՅԼԴ

# ՆՁԱՆԱԻՈՐ ՌՈԿԷՏԸ

Յ արզմ. անգլանիւնից  
ԿԱՐԵՆ ՄՐՁԱՅԵԼՆԱՆ

82

ՈԼ-13

ՄՈՍԿՎԱ—1920

1182

82  
11-13

պք

28 JUN 2005  
2 NOV 2009

ՕՍԿԱՐ ՌՈՒՅԼԴ

# ՆՇԱՆԱԻՈՐ ՌՈԿԷՏԸ

1002  
5664

~~XXXXXXXXXX~~



ՀՐԱՏԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԻ  
ԹՐՈՒՄ — 1920

26.08.2013

3551

ՆՇԱՆԱԻՈՐ ՌՈՅԷՏԸ

ՆՇԱՆԱԻՈՐ ՌՈՅԷՏԸ

Թագաւորի որդին աւուրմ էր ամուս-  
նանայ ու ամեն տեղ տիրում էր խն-  
դութիւնս Նա մի ամբողջ տարի սպասել  
էր իր հարսնացուն, ու վերջապէս, նա  
եկել էր: Նա մի Ռուս Պրինցուհի էր ու  
ողջ նանապարհը, Ֆինլանդիայից սկսած,  
անցել էր հիւսիսային եօթ եզերքու լը-  
ժած սահնակի մէջ: Սահնակը նման էր  
մի մեծ սփէ կարապի, ու նրա թւերի  
մէջ տեղը բազմել էր ինքը՝ փոքրիկ Պր-  
բինցուհին: Կնդմենի երկայն վերնազգես-  
տը հասնում էր մինչև ոտները, զլեին  
զրել էր արծաթէհիւս դիպակից փոք-  
րիկ զլխարկ, ու զունտա էր՝ ինչպէս  
Չիւնէ Պալատը, ուր միշտ սպրել էր:  
Նա աչքուն զունտա էր, որ երբ փո-  
ղոցներովն անցաւ՝ ամենքը զարմացան.  
«Նա նման է սպիտակ վարդի»: բացա-

կանչեցին նրանք ու պատշգամբներէջ  
ժողովի զանեցին նրա վրայ:

Իդեակի մուտքի մօտ, նրան զիմաւո-  
րելու համար, սպասուած էր Պրինցըր: Նր-  
բա աչքերը երազուն էին՝ մանուշակի  
պէս, ու ժողերը՝ նման մաքուր ոսկու:  
Երբ նա տեսաւ հարսնացուին, մի ծնկով  
չօքեց ու համբուրեց ձեռք:

— ձեր նկարը չքնաղ էր, շշնշաց նա.  
— Իսկ դուք աւելի չքնաղ էք, քան ձեր  
նկարը: Ու փոքրիկ Պրինցուհին շառա-  
զունեց:

— Առաջ նա նման էր սպիտակ վար-  
դի, սասաց մի երիտասարդ Մանկլաւիկ  
իբ հարեանին. — Իսկ այժմ նման է կար-  
միր վարդի: — Ու ողջ Արքունիքը հր-  
եռեց:

Երեք օր շարունակ ամենքի բերանին  
էր՝ «Սպիտակ վարդ, Կարմիր վարդ, Կար-  
միր վարդ, Սպիտակ վարդ»: Ու հրամա-  
լեց Թագաւորը, որ Մանկլաւիկի ռոճի-  
կը կրկնապատկեն: Քանի որ նա առհա-  
սարակ ռոճիկ չէր ստանում, ուստի դը-

րանից նա ոչ մի օգուտ չքաղեց, սակայն  
դա մեծ շնորհ էր համարուած: Ու ըստ  
պատշաճի յայտարարեցին «Պալատական  
լրագրում»:

Երեք օրից յետոյ կաթարեցին հարսա-  
նիքը: Դա մի շքեղ հանդէս էր. ու նա-  
րապսակները Թեւոնցուկ անցան ալ  
Թաւշէ ամպհովանու տակ, որ ասեղնա-  
դործել էին մանր մարդարիտներով: Ապա  
կառացաւ Արքայախան Բանկէտը, որ աւ-  
ւեց ուղիղ հինգ ժամ: Պրինցն ու Պրին-  
ցուհին նստել էին Մեծ Սրահի ճակա-  
տին ու խմում էին պալճառ բիւրեղէ  
դաւաթից: Այդ դաւաթից կարող էին  
խմել միմիայն իսկական սիրահարները,  
որովհետեւ, երբ կեղծ շրթունքներ էին  
կաշում, դաւաթն իսկոյն դորշանում էր,  
մուսլում ու միզով ծածկւում:

— Պարզ է, որ նրանք սիրում են  
լիրար, սասաց փոքրիկ Մանկլաւիկը. —  
պարզ ինչպէս բիւրեղը: — Ու Թագաւորը  
երկրորդ անգամ կրկնապատկեց նրա ռո-  
ճիկը:

— Ինչպիսի՞ շնորհ, բացականչեցին  
բոլոր պարտականները:

Բանկէտից լեռոյ պիտի լինէր Պարա-  
հանդէսը: Նորապսակները պիտի պարէին  
միասին Վարդ պարը, ու Թագաւորը  
խոստացել էր նուագել սրինգը: Նա շատ  
վատ էր նուագում, բայց ոչ ոք չէր հա-  
մարձակուում այդ ասել, որովհետեւ նա  
Թագաւոր էր: Իսկապէս նա միայն եր-  
կու եղանակ զիտէր ու երբէք չէր տար-  
բերում, թէ երկուսից ո՞րն է նուագում:  
Բայց դա կարևոր չէր, որովհետեւ ինչ էլ  
որ նա անէր, ամենքը պիտի բացական-  
չէին.

— Սքանչելի՛ է, սքանչելի՛:

Ծրագրի վերջին համարը հսկայական  
հրախաղութիւնն էր, որ պիտի լինէր  
նիշտ կէս զիշերին: Փոքրիկ Պրինցուհին  
կեանքումը երբէք հրախաղութիւն չէր  
տեսել, ու Թագաւորը հրամայել էր, որ  
հարսանիքին Արքայական Հրագէտը ոչ  
մի շանք չխնայի:

— Ինչի՞ են նման հրթիռները, հար-

ցրեց նա Պրինցին մի առաւօտ, երբ ըզ-  
բօնում էր տերրասում:

— Հիւսիսափայլի, սոսայ Թագաւորը,  
որ միշտ պատասխանում էր իրեն շուղ-  
ղուած հարցերին. — միայն աւելի բնա-  
կան են: Ինձ համար նրանք աւելի գե-  
րադասելի են, քան աստղերը, որովհետեւ  
միշտ զիտես, թէ երբ պիտի երևան, ու  
չքնաղ են՝ իմ սրնգի նուազի պէս: Ան-  
շուշտ դուք այդ կտեսնէք:

Ու Արքայական Պարտիզի վերջում մի  
մեծ տախտակամած էր շինած ու, հէնց  
որ, Թագաւորական Հրագէտը ամեն ինչ  
տեղաւորեց, հրթիռները սկսեցին խօսել  
միմիանց հետ:

— Աշխարհս, իբրև որ, սքանչելի է,  
բացականչեց փոքրիկ Մաղբահուրը. — նա-  
չէ՛ք այս դեղին կակաչներին: Եթէ ան-  
գամ իսկական պետարդներ էլ լինէին՝  
աւելի հառելի չէին լինի: Ես շատ ու-  
րախ եմ, որ նանապարհօրդութիւն եմ  
արել: Ըննապարհօրդութիւնը հրաշալի  
կերպով կատարելագործում է մասժօղու-

Թիւնն ու աղատում միաբեր կանխակալ  
կարծիքներից:

— Արքայական Պարսէզը դեռ ևս  
ողջ աշխարհը չէ, դժւէ, տխմար Մաղրա-  
հուր, ասաց չոսմէական մեծ Մոմբ.—  
Աշխարհս մի հսկայական տարածութիւն  
է, ու երեք օր կաեի, մինչև որ լիովին  
տեսնես:

— Ամեն տեղ, որ հաւանում ես, աշ-  
խարհ է քեզ համար, բացականչեց մտա-  
խոհ չրանիւրը, որ ծնած օրիցը կապուած  
էր եղևնու մի հին արկղից ու ինքն  
իրեն, պարծենում էր իր կտարած սրտի  
վրայ:— Սակայն սէրն այլևս ընդունուած  
չէ: Բանաստեղծները սպանեցին: Այն-  
քան շատ գրեցին նրա մասին, որ այլևս  
ոչ որ նրանց չի հաւատում, ու ես ամե-  
նին չեմ դարմանում: Ճշմարիտ սէրը  
ատուապում է լուս: Յիշում եմ, մի ան-  
գամ ես... բայց դու հին բան է: Ռո-  
մանտիզմն այժմ անցեալին է պատկա-  
նում:

— Մնտի բան է, ասաց չոսմէական

Մոմբ.— Ռոմանտիզմը երբէք չի մեռնում:  
Նա նման է Լուսնին, ու աղրում է յա-  
ւիտեան: չարսն ու փեսան, զօր օրինակ,  
սիրում են իրար շատ խորը: Այդ ամե-  
նը լսեցի այս առաւօտ փաթեթաթղթից  
շինած մի փամփուշտից, որը պատահ-  
մամբ նոյն արկղուցն էր, ուր ես էի, ու  
դիտէր պալատական վերջին նորութիւն-  
ները:

Բայց չրանիւր շարժեց գլուխը.

— Ռոմանտիզմը մեռել է, Ռոման-  
տիզմը մեռել է, Ռոմանտիզմը մեռել է,  
շշնջաց նա: Նա այն մարդկանցից էր,  
որոնք կարծում են, եթէ միեւնոյն բանը  
յաճախ ու շարունակ կրկնես՝ վերջ ի  
վերջոյ ճշմարտութիւն կդառնար:

Յանկարծ լուեց մի սուր ու չոր  
հազ, ու ամենքը հետ նայեցին:

Այդ ձայնը հանեց մի բարձրահասակ  
ու գոռոզատեսու բոկէտ, որ կայրուած  
էր մի երկար ձողի ծալքի: Նա միշտ,  
մի օրէէ նկատողութիւն անելուց առաջ,

հագում էր, որպէսզի վրան ուշադրութիւն դարձնեն:

— Է՛հրմ, ր՛հրմ, ասաց նա, ու ամենքը լռեցին, բացի խեղճ հրանիւից, որ անխօս շարժում էր գլուխն ու շըրնջում:

— Ռոմանտիկմը մեռել է:

— Կարգի՛ն կացէք, կարգի՛ն կացէք, գոչեց մի Պետարդ: Նա մի քիչ քաղաքագէտ էր ու տեղական բնորութիւններն ժամանակ միշտ աչքի ընկնող դեր էր խաղում, ուստի և սովոր էր զուտ Պարլամենտական արտայայտութիւններին:

— Մեռել է ընդ միշտ, շնչաց հրանիւն ու ընեց:

Ճէնց որ տիրեց խորին լռութիւն, Ռոկէտար հազաց երբորդ անգամ ու սկրսեց: Նա խօսում էր մեղմ ու յստակ ձայնով, ինչպէս եթէ թեղադրելիս լինէր իր յուշատեարն ու շարունակ նայելիս նրա ուսերի վրայից, ում թեղադրում էր: Իրօք, նրա ձևերը երևելի էին:

— Ինչքա՞ն երջանիկ է Քաղաւորի

որդին, նկատեց նա, որ նա պսակւում է ճիշտ այն օրը, երբ ինձ պիտի արձակեն: Եթէ, իրօք, առաջօրէն են յարմարեցրել, զրանից էլ լաւ առիթ չէր կարող լինել: Բայց Պրինցները միշտ բազդաւոր են:

— Սոսուա՞մ իմ, ասաց փոքրիկ Մալրահուրը.— ես միանգամայն այլ կերպ էի մտածում՝ որ մեզ պիտի արձակեն ի պատիւ Պրինցին:

— Գուցէ քե՛զ, պատասխանեց նա.— խկապէս չեմ էլ կասկածում, որ այդպէս է. իսկ այլ է իմ բանը: Ես շատ նշանաւոր մտողներից: Մայրս իր ժամանակի ամենահռչակաւոր հրանիւն էր ու անուն էր հանել իր նազելի պարով: Իր հասարակական մեծ ցոյցի ժամանակ, նա տասնինն անգամ պտոյտ եկու, մենչև որ հանգաւ, ու ամեն մի պառլամենտ նա օրում եօթ վարդադոյն աստղ արձակեց: Նրա տրամագիծը երեք ու կէս ֆուտ էր ու շինած էր լաւագոյն վառօդից:

Նայրս, ինձ պէս, Ռոկէա էր ու Փրանսիական ծաղում ունէր: Նա այնքան բարձր էր թաչում, որ մարդիկ վախենում էին՝ չլինի թէ այլևս ցած չիջնի: Նա ցած էր իջնում տակաւին, որովհետեւ բնաւորութեամբ հեղ էր, ու իր լուսափայլ վայրէջքը կառարում էր ոսկէ ասրափով: Նրա խաղի մասին լրագիրները շատ գովասանական խօսքեր գրեցին: Նոյն իսկ Պալատական Լրագիրը նրան վերադրեց չրագրութեան արուեստի լաղթանակը:

— Այսինքն չրագրութեան, չրագրութեան, ասաց Բէնդալեան Կրակը. — Գիտեմ, որ կոչւում է չրագրութիւն, որովհետեւ ես այդ տեսել եմ զբաժ իմ սեփական տուփի վրայ:

— Իսկ ես ասում եմ՝ չրագրութիւն, պատասխանեց Ռոկէա խտորէն, և Բէնդալեան կրակն այնպէս ընկնուեց, որ սկսեց լոխորտալ փոքրիկ ծաղրահուրների առաջ, ցոյց տալու համար, որ ինքը կարեւոր ոմն է:

— Ուղում էի ասել, շարունակեց Ռոկէա. ուղում էի ասել, հա՛, ի՞նչ էի ուղում ասել:

— Իսկ խօսում էիք ըս մասին, պատասխանեց չոմէական Մոմը:

— Իհարկէ: Ես գիտեմ, որ հետաքրքրական նիւթի մասին էի խօսում, երբ ինձ այնպէս կոպիտ կերպով ընդհատեցին: Առհասարակ ես ատում եմ կոպիտ ու աղեղ վարձունքը, որովհետեւ ես վերին աստիճանի զգայուն եմ: Ոչ ոք աշխարհիս երեսին այնպէս զգայուն չէ, ինչպէս ես, ես այդ հաստատ գիտեմ:

— Ի՞նչ բան է զգայուն ձարդը, ասաց Պետարդը չոմէական Մոմին:

— Իսկ մի մարդ է, որը կոխ է տալիս ուրիշի ստի մատը, որովհետեւ իր ստի վրայ կոշա ունի, պատասխանեց չոմէական Մոմը մեղմ շշուկով: Եւ Պետարդը քիչ մնաց ծիծաղից պաթի:

— Ասա՛ խնդրեմ, ինչո՞ւ ես ծիծաղում, հետաքրքրուեց Ռոկէա. — Ես չեմ ծիծաղում:

— Ես ծիծաղում եմ, որովհետև եր-  
շանիկ եմ, պատասխանեց Պետարիչը:

— Պատեառը շատ եսասէր է, բար-  
կացած ասաց Ռոկէտը:— Ինչ իրաւուն-  
քով ես դու երշանիկ: Դու պիտի ու-  
րիշների մասին մտածես. խեղապէս դու  
պիտի մտածէիր իմ մասին: Ես միայն իմ  
մասին եմ մտածում և ուզում եմ, որ  
բոլորն էլ նոյնն անեն: Ահա թէ ինչ է  
նշանակում կարեկցութիւն: Դա մի օբան-  
չելի առաքինութիւն է, որից իմ մէջը  
կայ խոշոր չափերով: Ենթադրենք, որի-  
նակի համար, այս երեկոյ ինձ մի բան  
պատահի՝ ի՞նչ գոբաղութիւն կլինի  
դա բոլորի համար: Պրինցն ու Պրինցու-  
հին միանգամայն կանբաղդանային, նրանց  
ողջ ամուսնական կեանքը կթունաւոր-  
ուէր, ու ինչ վերաբերում է Թադաւո-  
րին, ես զիտեմ, որ չէր զիմանայ այդ  
ցաւին: Իսկապէս, երբ ես սկսում եմ  
կշռադատել իմ զիրքի կարևորութիւնը՝  
արտաթուելու չափ լուզւում եմ:

— Եթէ դու ուզում ես ուրիշներին

հատուց պատեառել, բազականչեց Հուս-  
մէական Մամը,— քեզ պիտի չոր պահես:

— Անշո՛ւշտ, գոչեց Բէնդալեան Կրա-  
կը, որն արդէն լաւ տրամադրութեան  
մէջ էր:— Յիշ է պահանջում սովորական  
առողջ դատողութիւնը:

— Սովորական դատողութիւնը, ինչ-  
պէ՛ս չէ, ասաց Ռոկէտը զայբացած,—  
բայց դուք մոռանում էք, որ ես շատ  
անսովորն եմ և շատ էլ նշանաւոր: Այո՛,  
սովորական առողջ դատողութեան տէր  
կարող է լինել ամեն մէկը, եթէ միայն  
զուրկ է երևակայութիւնից: Իսկ ես ու-  
նիմ երևակայութիւն, որովհետև ես եր-  
բէք չեմ մտածում առարկաների մասին  
այնպէս, ինչպէս նրանք իրապէս գոյու-  
թիւն ունին: Ես միշտ նրանց մասին մը-  
տածում եմ այնպէս, ինչպէս եթէ նրանք  
միանգամայն այլ լինէին, իսկ ինչ վերա-  
բերում է ինձ չոր պահելուն, բայտ երե-  
ւոյթին ալտանդ չի գանուի մէկը, որ կա-  
բողանար գնահատել զգալուն խառնուած-  
քը: Բարեբաղդաբար, դա իմ փոյթը

1002  
5995



չէ: Միակ բանը որ մարդու կեանքին նեցուկն է, դա այն գիտակցութիւնն է, որ ամենքն էլ անասնման ստոր են քեզանից, և այդ զգացմունքը ես միշտ դարդացրել եմ իմ մէջ: Սակայն դուք ամենքդ էլ անսիրտ էք: Դուք այստեղ այնպէս էք ծիծաղում ու խնդում, կարծես թէ Պրինցն ու Պրինցուհին նոր չլինին պսակուած:

— Իէն, լա՛ւ, գոչեց մի փոքրիկ չրագուղ. — ինչո՞ւ չծիծաղենք: Դրանից էլ լաւ առիթ, երբ ես կարող եմ թռչել դէպի վեր ու պատմել աստղերին նրանց մասին ամեն ինչ: Դուք կտեսնէք, ինչպէս նրանք կչողան, երբ ես պատմեմ չքնաղ հարսնացուի մասին:

— Ա՛խ, ի՛նչ դռեհիկ կարծիք ունիք դուք կեանքի մասին, առայ Ռոկէտը. — սակայն ես հէնց այդպէս էլ սպասում էի: Չեր մէջ ոչինչ չկայ. դուք սին ու դատարկ էք: Ինչուք թէ Պրինցն ու Պրինցուհին կամենում են զնալ ապրելու համար մի երկիր, ուր մի խոր դեմ

կայ, և զիցուք՝ նրանք ունին մի հատիկ դաւակ, մի փոքրիկ շիկահեր, մանուշակազոյն աչքերով տղայ՝ ինչպէս ինքը՝ Պրինցը: Եւ զիցուք՝ մի օր նա գնում է զբօսնելու իր դայեակի հետ: Եւ զիցուք թէ դայեակը քնում է շամբուկի ծառի տակ: Եւ զիցուք՝ փոքրիկ տղան քնկնում է խոր գետի մէջ ու խեղդւում: Սարսափելի՛ դժբաղդութիւն: Խեղճ մարդիկ, կորցնել միակ որդի՛ւն, Իօկապէս սոսկալի՛ է: Ես երբէք չէի դիմանայ:

— Սակայն նրանք դեռ չեն կորցրել իրենց միակ զաւակին, առայ չռամէակուն Մոմը. — և ոչ էլ հետներն անբաղդութիւն է պատահել:

— Ես ամենեին չառայի, թէ պատահել է, պատասխանեց Ռոկէտը. — Ես առայի, որ կարող է պատահել: Եթէ նրանք կորցրած լինէին իրենց միակ զաւակին, այլեւ դրա մասին կարիք չէր լինի խօսելու: Ես ատում եմ նրանց, որոնք թափուած կաթի համար լաց են լինում: Իսկ երբ ես մտածում եմ, որ

նրանք կարող էին կորցնել իրենց միակ  
գաւակին, ուղղակի զգացում եմ:

— Այդ մէկը ճիշտ է, բայցականչեց  
Բէնդալեան Կրակը. — իրօք, դու ամենա-  
զիւքազգաց անձնաւորութիւնն ես, որին  
երբ և իցէ հանդիպել եմ:

— Իսկ դու ամենակոպիտ անձնաւո-  
րութիւնն ես, որին ես երբ և իցէ հանդի-  
պել եմ, ասաց Ռոկէտը. — ու չես կարող  
դու հասկանալ իմ մտերմութիւնը Պրին-  
ցի հետ:

— Չէ որ դու նրան չես ճանաչում,  
մրթմրթաց չռոմէական Մոմը:

— Ես ամեննին չեմ ասել, թէ ճա-  
նաչում եմ, պատասխանեց Ռոկէտը: —  
Ինձ թւում է, որ եթէ նրան ճանաչէի  
ես նրա բարեկամը չէի լինի: Շատ վր-  
ասանգաւոր է, երբ բարեկամիդ հանա-  
չում ես:

— Աւելի լաւ կանէիր, եթէ քեզ  
չոր պահէիր, ասաց չրադունդը. — դա  
շատ անհրաժեշտ է:

— Աւելի անհրաժեշտ է քեզ համար.

զրա մասին ես չեմ կասկածում, պատաս-  
խանեց Ռոկէտը. — քսկ ես լալիս եմ, երբ  
լացս զալիս է:

Եւ նա, իրօք, լաց եղաւ իսկական ար-  
տասուքներով, որոնք զլորուեցին ցցի  
վրայից՝ անձրևի կաթիլների պէս, ու  
քիչ ճեաց, որ խեղդէին երկու փոքրիկ  
լոգէղի, որոնք մտածում էին բաւն վանել  
ու ապրելու համար չոր ու չարմար տեղ  
էին որոնում:

Ըստ երևոյթին նրա խառնուածքը ու-  
մանտիքական է, ասաց չրադունդը. —  
որսվեաւ նա առանց պատճառի լալիս  
է: Ու նա խորը հառաչեց ու մտածեց իր  
եղենուց շինած արկղի մասին:

Իսկ չռոմէական Մոմն ու Բէնդալեան  
Կրակը բոլորովին զայրացած, բարձրա-  
դոչ ձայնով, սկսեցին իրկնել:

— Փչում է, փչում է:

Նրանք վերին աստիճանի դորժնական  
էին ու մի որևէ բանի դէմ առարկելիս՝  
ասում էին.

— Փչում է:

Ապա ծագեց Լուսինը՝ ինչպէս մի ար-  
ձաթէ չքնաղ վահան, ու փայլեցին աստ-  
ղերը, ու պալատից, լուսեց երաժշտու-  
թեան ձայնը,

Պրինցն ու Պրինցուհին վարուժ էին  
պարերը: Նրանք պարուժ էին այնքան  
սքանչելի, որ բարձրահասակ, սպիտակ  
շուշանները գաղտազօղի նայուժ էին  
պատուհանից ու հետեւում պարին, և  
կարմիր, խոշոր խաշխաշները շարժում  
էին գլուխներն ու չափ տալիս:

Ապա զանգը խփեց տաս, ապա տաս-  
ներմէկ, ապա՝ տասներկու, ու, կէս գիշե-  
րուայ զանգի վերջին հարուածից չետօյ,  
ամենքը դուրս եկան տերրասը, և Թա-  
գաւորն ուղարկեց Պալատական ճրագէ-  
տի հետեւից:

— Ճրախաղը սկսէ՞ք, ասաց Թագա-  
ւորը: Եւ Պալատական ճրագէտը խորը  
գլուխ տուեց ու անցաւ պարտիզի միւս  
ծայրը: Նա հետը վեց օգնական ունէր,  
որոնցից ամեն մէկը երկար փայտի ծայ-  
րից կախած մի—մի շահ էր տանում:

Իսկուպէս մի հոյակապ տեսարան էր՝  
Վր՛՛ր՛ղ... Վր՛՛ր՛ղ... շառաչեց ճրանիւր,  
հէնց որ սիտեց պատուեր: Բու՛՛մ, բու՛՛մ...  
շառաչեց Նումէական Մոմը: Ապա Ծագ-  
րահուրը պար բռնեց հրապարակի վրայ,  
ու Բէնդալեան Կրակը ներկեց ամեն ինչ  
կարմիր գոյնով: «Մնաք բարձ՛վ», բացա-  
կանչեց ճրագէտը՝ վեր սլանալուն պէս՝  
կապոյտ կայծեր ցանելով: Բանգ...բանգ...  
պատասխանեցին Պետարգները, որոնք  
սաստիկ ուրախ էին: Ամենքը մեծ լա-  
ջողութիւն ունեցան, բայց նշանաւոր  
Ռոկէտից: Լաց լինելուց նա այնքան էր  
խոնավացել, որ ամենեւին չկարողացաւ  
վեր բարձրանալ: Ամենալու բանը, որ  
կար նրա մէջ՝ փառօղն էր, ու դա այն-  
քան էր թռչուել արցունքներից, որ այլևս  
բանի պէտք չէր: Նրա բոլոր խեղճ աղ-  
ղահանները, որոնց հետ նա երբէք չէր  
խօսի սառնց արհամարական ժպտի, վիթ-  
ւալացան երկիւնքը, ինչպէս չքնաղ ծաղիկ-  
ներ՝ հրեղէն կօկոններով:

Կեցցէ՛, կեցցէ՛, բացականչեց ողջ

Պալատը: Աւ փքրիկ Պրինցուհին հա-  
նայրից ծիծաղեց:

— Երևի ինձ պահել են մի աւելի  
մեծ հանգիտի համար, ասաց Ռոզէտը:  
— Անկասկած այդպէս է:— Աւ նա աւելի  
գոռոզացաւ, քան առաջ էր:

Տեաւեալ օրը բանւորները եկան պար-  
տէղը կարգի բերելու:

— Ըստ երևոյթիւն պատգամաւորու-  
թիւն է, ասաց Ռոզէտը:— Ես նրանց  
կրնգունեմ պատշան արժանապատու-  
թեամբ:

Աւ նա բարձրացրեց թիթը, դէժըր  
խոժոռեց, իբր թէ մի ինչ որ կարեոր  
բանի մասին մտածելիս լինի: Իսկ բան-  
ւորները ամենեւին չնկատեցին նրան: Մի-  
այն դնայիս մէկի աչքովն ընկաւ:

— Տէ՛յ, զոչեց:— սա ի՛նչ եղիելի Ռո-  
զէտ է, ու պատի վրայից զէն ձգեց  
փոսը:

— Եղիելի Ռոզէտ, եղիելի Ռո-  
զէտ, ասաց նա պտաուելով օղի մէջ:—  
անկարելի է: Երևելի Ռոզէտ, անթէ

ինչ էր աղում ասել: Եղիելի և երե-  
ւելի միակերպ հնչուեւ ունին, յաճախ  
նաև նոյն իմաստը:

Աւ նա ընկաւ տղմի մէջ:

— Այնքան էլ յարմար տեղ չէ այս-  
տեղ, նկատեց նա:— սակայն, անկասկած,  
մի օրեւէ նորաձև լոզարան է սա, ու  
ինձ ուղարկել են այտտեղ, որ աւարդու-  
թիւնս կազդուրեմ: Զղերս, իսկապէս,  
շատ են քայքայուել, ու ևս հանգստի  
կարիք ունիմ:

Յանկարծ ջրի տակից նրա առաջը դուրս  
եկաւ փայլուն, զոհար աչքերով ու կանաչ  
լրծաւոր մորթով մի փոքրիկ Գորս:

— Ի՞նչ և՛մ տեսնում: Նորե՞կ, ասաց  
Գորսը:— Իհարկէ, վերջ ի վերջոյ տղմից  
լաւ բան չկայ: Տուէ՛ք ինձ անձրեակի՛ն  
եղանակ ու մի լնակ, և ես երջանիկ կը-  
լինեմ: Դու կարծում ես այս երեկոյ  
անձրեակի՛ն կլինի: Ես համոզուած եմ, որ  
այո՛, ես յոյս ունիմ, բայց ամսոս, որ  
երկինքը միանգամայն կապոյտ է ու ան-  
ամպ:

— Բհր՛մ, բհր՛մ... ասաց Ռոկէան ու սկսեց հազար:

— Ի՛նչ անուշ ձայն ունիս, բացահանչեց Գորար:— Ուղղակի կռկռոցի է նման, իսկ կռկռոցն իհարկէ ամենաերաժրշտական հնչիւնն է աշխարհիս երեսին: Այս երեկոյ դու կլսես մեր համերգը: Մենք նստում ենք ազարակատիրոջ տան կից բաղերի հին ընակի մէջ, ու Լուսինը ծագելուն պէս՝ սկսում մեր համերգը: Իսկ այնքան զմայլիչ է, որ ամենքն արթնանում են մեզ լսելու: Իբրք, դեռ երէկ էր, երբ ես լսեցի թէ ինչպէս ազարակատիրոջ կինն ասում էր իր ծօրը, որ ամբողջ զիշերը մեր պատճառով աչքը չի կպցրեր Շատ հանելի է, երբ մարդ այդպիսի մեծ ժողովրդականութիւն է վայելում:

— Բհր՛մ, բհր՛մ, բարկացած ասաց Ռոկէար: Նա շատ վշտացել էր, որ չկարողացաւ մի խօսք ասել:

— Իսկապէս, ի՛նչ անուշ ձայն է, շարունակեց Գորար:— Յոյս ունիմ, որ կը

գաս բաղերի ընակը: Ես գնում եմ աղջիկներս որոնեմ: Ես վեց հատ չքնաղ աղջիկ ունիմ, ու վախենում եմ մի գուցէ Գալաձուկը զատահի նրանց: Կատարեալ հրէշ է նա, ու անտարակոյս աղջիկներիցս նախահաշ կտարքի իբ համար: Ի՛նչ, ցտեսութիւն: Հաւատացնում եմ քեզ, որ մեր զբոյցից ես մեծ հաճույք ստացայ:

— Զրո՛յց, ինչպէ՞ս չէ, ասաց Ռոկէար:— Շարունակ դու ինքդ քեզ հետ խօսեցիր: Իսկ զրոյց չէ:

— Լսող պիտի լինի՞, թէ ոչ պատասխանեց Գորար:— Ես սիրում եմ ի՛նքս միշտ խօսել: Իսկ խնայում է ժամանակը և վիճարանութեան տեղիք չի տալիս:

— Իսկ ես սիրում եմ վիճարանելու ասաց Ռոկէար:

— Զկարծեմ թէ, քաղաքավարի ասաց Գորար:— վիճարանութիւնը վերին աստիճանի գոեհիկ բան է, որովհետեւ լուր հասարակութեան մէջ բոլորն էլ միեւնոյն կարծիքն ունին: Ցտեսութիւն, կրկին:

հեռուից հեռու եւ արդէն տեսնում եմ  
աղջկներէս: Ու փոքրիկ Բորտր լողալով  
գնաց:

— Իսկ շատ դրզաբիչ անձնաւորու-  
թիւն ես, ասաց Ռոկէտը.— Ե շատ էլ  
անկիրթ: Ես ասում եմ նրանց, որոնք,  
— այն ժամանակ, երբ մէկը ուզում է  
խօսել իր մասին, ինչպէս օրինակ ես,—  
խօսում են իրենց մասին, ինչպէ՞ր օրի-  
նակ դու: Իրա անունը եւ գնում եմ՝  
եսասիրութիւն, իսկ եռասիրութիւնը՝  
զղուելի բան է, մանաւանդ իմ խառնու-  
ածքն ունիցողի համար, որովհետեւ ես  
շատ չալտնի եմ իմ կարեկից բնաւորու-  
թեամբ: Իսկն ասած, դու ինձանից օրի-  
նակ պիտի վերցնես: Ինձանից լաւ փի-  
պար չես գտնի: Այժմ, բանի որ առիթը  
կայ, լաւ կ'իմէր, եթէ օգտուէիր, որով-  
հետեւ ես շուտով վերագառնալու եմ Պա-  
լասը: Պալասում ես շատ սիրելի անձ-  
նաւորութիւն եմ: Իսկն ասած, էրէկ Պր-  
բինցն ու Պրինցուէին պսակուեցին ի  
պատիւ ինձ: Իհարկե, այդ ճասին դու

ոչինչ չգիտես, որովհետեւ դաւառում ես  
ապրում:

— Զուր ես հետը խօսում, ասաց մի  
ձպուռ, որ նստել էր դարչնագոյն եղէզի  
գրայ:— Միանգամայն ի գուր, որովհետեւ  
նա արդէն գնացել է:

— Է՛հ, ինքը կտուժի, ոչ թէ ես, պա-  
տասխանեց Ռոկէտը: Միւննայն է, եւ չը-  
պիտի լռեմ միայն նրա համար, որ նա  
ուշադրութիւն չի դարձնում: Ես սիրում  
եմ ինքս ինձ լսել: Դա իմ ամենամեծ  
հաճութեանց մէկն է: Յաճախ ինքս ինձ  
հետ ես զրոյց եմ անում, ու ես այնքան  
խելօք եմ, որ երբեմն ասածներէիցս մի  
խօսք անգամ չեմ հասկանում:

— Այն ժամանակ դու անպատճառ  
դասախօսութիւն պիտի կարդաս Փիլի-  
սոփալութիւնից, ասաց ձպուռը: Եւ պար-  
զելով իր շղարշանման չքնաղ զոյգ թե-  
ւերը՝ սլացաւ դէպի երկինքը:

— Ինչ մեծ չիմարութիւն արաւ, որ  
չմնաց այտեղ, ասաց Ռոկէտը,— հաւա-  
տացած եմ, որ իր միտքը կատարելա-

գործերու այսպիսի առիթ նա միշտ չի ունենում: Յամենայն դէպս դա իմ բանք չէ: Հանճարը, ինչպիսին իմն է, անկասկած մի օր կգանի իր գնահատութիւնը: Ու նա խորատուղուեց տղմի մէջ աւելի ևս:

Մի փոքր անց լողաց դէպի նա մի մեծ Սպիտակ Բաղ: Նրա ոտները դեղին էին, թաթիկները՝ թաղանդով ծածկուած, և իր երերուն քայուածքի համար գեղեցկուհի էր համարուում:

— Աս՛ դ, զա՛ դ, զա՛ դ... ասաց նա.

— Ի՛նչ տարօրինակ կերպարանք ունիս: Զի՛ կարելի հարցնել՝ դու այդպէս ես ծնու՞ել, թէ՛ դժբաղդ պատահարից է:

— Իսկոյն երևում է, որ դիւզ տեղ ես ապրել, պատասխանեց Ռոկէտը, — թէ ոչ իսկոյն կիմանայիր, թէ ո՛վ եմ ես: Յամենայն դէպս ես ներում եմ քո յազիտութիւնը: Ի՛ զուր կլինէր սպասել, որ ուրիշներն ել մեզ պէս նշանաւոր լինեն: Անկասկած դու պիտի դարձանաս, երբ լսես, որ ես կարող եմ թուչել մինչև եր-

կինքն ու լեռ գա՛լ՝ ոսկէ անձրևի տարափի պէս,

— Ինչի՞ս է պէտք, ասաց Բաղը, — երբ ոչ ոք զրանից շահ չունի. եթէ՛ դու կարողանայիր հերկել դաշտը՝ եզան պէս, կամ քաշել սայլը՝ ձիու պէս և կամ հրակել ոչխարը՝ հօտի շան պէս, բանի նման կլինէր,

— Սիրու՛ն արարած, բացականչեց Ռոկէտը գոռոզաբար. — Ես տեսնում եմ, որ դու ծագումով ստոր դասակարգից ես: Նա, ով իմ դիրքն ունի, երբէք շահաւէտ չի լինում: Մենք ունինք մի շարք կատարելութիւններ, և դա աւելի քան բաւական է: Ես՛ ինքս, ոչ մի արհեստի ձգտում չունիմ, ևս առաւել մի այնպիսի արհեստի, ինչպիսին դու ես ինձ յանձնարարում: Իսկապէս ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ ծանր աշխատանքն ապաստարան է նրա՛նց համար, որոնք միանգամայն անգործ են:

— Լա՛ւ, լա՛ւ, ասաց Բաղը, որը վերին աստիճանի խաղաղասէր էր և ոչ

«քի հետ չէր վիճում: Սմեն ժարդ զոկեա-  
շակի տէր է: Յամենայն զէպս ես յոյս  
ունիմ, որ քս ընակատեղին այստեղ կըն-  
տրես:

— Օ, Աստուած ո՛չ անի, բացական-  
չեց Ռոկէտը.— Ես այստեղ լոկ հիւր եմ,  
մի երևելի հիւր: Բանն այն է, որ այս-  
տեղ բաւականին ձանձրայի է: Ոչ հասո-  
րակութիւն կայ և ոչ էլ առանձնութիւն:  
Կատարեալ մի արուտրձան է: Հաւանա-  
կանաբար կվերագառնամ Պալաքը, որով-  
հետև ես զիտեմ, ինձ վիճակուած է աշ-  
խարհում մեծ անուն հաներ:

— Մի անգամ ես էլ ձոածեցի հա-  
տարակական գործերով պարապել, նկա-  
տեց Բաղը:— Երոզելու կարօտ շա՛ս  
բան կայ: Անցեալները մի միտինդում  
նոյն խոկ նախագահութիւն էլ արի և ա-  
մեն բանի գէմ, ինչ մեր դուրը չէր դա-  
լիս, դատապարտութեան ուղղուցիւններ  
անց կացրինք: Սակայն քստ երևոյթին  
այդ ամենը ոչ մի ազդեցութիւն չունե-

ցաւ: Սլօժմ ես անակեաց՝ եմ դառել և  
իմ ընտանիքի պէտքերն եմ հոգում:

— Ես սակզուած եմ հասարակական  
կեանքի համար, ասաց Ռոկէտը.— այդ-  
պէս են և իմ բոլոր ազգականները, մինչև  
անգամ ամենից նուաստադոյները: Ուր  
էլ մենք երևալու շինինք՝ միշտ մեծ ու-  
շաղրութեան ենք արժանանում: Ինքս  
դեռ ինչպէս հարկն է երևան չեմ եկել,  
խոկ երբ երեան դամ, մի անսման տե-  
սարան կլինի: Սչն ինչ անալին կեանքը  
ժարդուս արագ կերպով ձերայնում է ու-  
մտքիցը բարձր գաղափարները խլում:

Ախ, կեանքի բարձր գաղափարները,  
ի՛նչ սքանչելի բան է, ասաց Բաղը.—  
ու չիղեցնում է ինձ թէ որքա՛ն ես սո-  
ված եմ:

Ու նա հոսանքով դէպի վար լողաց՝  
կրկնելով:

— Ղա՛ղ, դա՛ղ, քա՛ղ...

— Կա՛ց, կա՛ց, ճչաց Ռոկէտը.— ես  
դեռ շատ բան ունիմ քեզ ասելու: Իսկ  
Բազն ուշադրութիւն չգարձրեց:— Ու-

բախեմ, որ նա գծոց, ասաց նա ինքն իրեն.—Նա քաղքենու գատողութիւն ունի:—ու նա աւելի ևս խորասուզւեց տղձի մէջ ու սկսեց մտածել հանճարի մենտիթեան մասին, երբ յանկարծ սզիտակ հագնւած երկու փոքրիկ տղայ լծակի ափն իջան՝ մի կաթսայ ու մի քիչ էլ ցախ հետները:

— Երեւի պատգամաւորութիւն է ասաց Ռոկէան՝ ու իրեն արժանավայել տեօք տուեց:

— Տէ՛, բացականչեց տղաներից մէկը.—նայէ՛ք այս հնամաշ ձողին: Չարմանալի է, ո՞քտեղից է այտեղ ընկեր: Ու հանեց Ռոկէար յծակի միջից:

— Հնամա՛շ ձող, ասաց Ռոկէար.— անհարելի՛ է: ոսկետա՛շ ձող, ահա ի՛նչ ասաց: Ոսկետա՛շ ձող՝ շատ հաճելի է: Թսկն ասած նա ինչ շիտթում է մի որ-լէ է բարձրաստիճան պալատահանի հետ:

— Արի կրա՛կը ձգենք, ասաց միւս տղան.— կաթսան աւելի շուտ ետ կգայ:

Նրանք թուփ արին բերած ցուխը, վերան գրին Ռոկէան ու կքաղք վառեցին:

— Տիանալի է, բացականչեց Ռոկէարը, — ուզում են ինչ օրը ցերեկով արձակել, այնպէ՛ս որ ամենքն ինչ կտեսնեն:

— Հիմա գնա՛նք ընելու, ասացին տղաները, — է երբ ընից արթնանաք՝ կաթսան արդէ՞ն ետ եկած կը լինի:

Եւ նրանք պառկեցին խոտի վերայ ու փակեցին աչքերը:

Հիմա ես կը բարձրանամ վեր, բացականչեց Ռոկէան ու ցցուեց, — գիտեմ, որ ես աւելի բարձր պիտի թռչեմ, քան ասողերը, աւելի բարձր՝ քան լուսինը, ու աւելի բարձր քան արևը: Իբօք, ես այնքա՛ն բաժր պիտի թռչեմ, որ...

— Վր՞դ վրդ, վր՞դ... ու սլացաւ նետի պէս դէպի վեր:

— Սքանչելի՛ է, բացականչեց նա, — այսպէս պիտի թռչեմ յաւէտ. ինչպիսի յաջողութիւն:

Բայց նրան ոչ ոք չտեսաւ:

Յեառյ նրա մարմնով մի տարօրինակ  
սարսուռ անցաւ:

— Հիմա կպայթեմ, բացականչեց նա.  
— Ես պիտի հրդէհեմ ողջ աշխարհն  
ու այնպիսի ազմուկ հանեմ, որ ամբողջ  
տարին այլևս ուրիշ նիւթի մասին չխօ-  
սեն:

Ու իսկապէս պայթեց: Բա՛մ, բա՛մ,  
բա՛մ... հայթեց վառօդը: Կասկած չկար՝  
վառօդն էր:

Բայց նրան ոչ ոք չլսեց, և ոչ էլ, մին-  
չև անգամ, երկու փոքրիկ տղան, որով-  
հետև նրանք քաղցր քնի մէջ էին:

Ու այդ բարբից չեռոյ մնաց միայն  
նրա ձողը, որ քնիւ լնակի շուրջը բո-  
րօսնող մի Սաղի մէջքի վրայ:

— Տէ՛ր Աստուած, բացականչեց Սա-  
ղը. — հիմա էլ սկսել է ձողի անձրև դալ:  
Ու սուղուեց ջրի տակը:

— Չասացի՞, որ մեծ ազմուկ պիտի  
հանեմ, շշնջաց Ռոկէտն ու հանգաւ:



Հիմա էլ կպայթեմ



Հիմա էլ կպայթեմ  
Հիմա էլ կպայթեմ

Գրքի Գ՝ 10 ԲԻՐ.

Տպար. Գեղար. Հայկ. Գործ. Բազմա, Արմենիայի Գ., 2  
Խոսր. Ընտրան. Արմեն. Կոմիտ., Մոսկվա, Արմենիայի փող., 2